ՕՍՄԱՆՅԱՆ ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ՄԻ ՔԱՆԻ ԲՆՈՐՈՇ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Գ. ԻՆՃԻԿՅԱՆ

Օսմանյան կայսրության սոցիալական կարգերի, հատկապես ֆեոդալիզմի շրջանի ուսումնասիրության խնդիրը վերջին քսան տարիներում դարձել է հետաքրքրության առարկա ինչպես Թուրքիայում, այնպես էլ արտասահմանում։ Պատմաբաններ, սոցիոլոգներ, գրողներ, կուսակցական ու պետական գործիչներ, ամեն մեկը յուրովի, փորձում են պատասխանել այն հարցին, թե ինչո՞ւ երբեմնի հզոր կայսրությունը իր զարգացման ընթացքում հետզհետե թուլացավ, ընկավ խոր ճգնաժամի մեջ և ի վերջո կործանվեց։ Ազատագրվեցին դարերով ծանր լծի տակ հեծող ժողովուրդները, իսկ բուն Թուրքիան հայտնվեց հետամնաց երկրների կարգում։

Քանի որ կայսրության տնտեսական հիմքը կազմում էր գյուղատնտեսությունը, ուստի և հողային հարաբերությունների մասին լույս են տեսել առավել թվով աշխատություններ։ Հեղինակների մի մասը փորձում է դրված հարցի պատասխանը որոնել խաշնարած և վաչկատուն թուրք ցեղերի նստակյաց դառնալու մեջ, որի պատճառով պետությունը կորցրեց իր ռազմական հզորությունը։ Մյուսները քննադատում են ստեղծված քաղաքական ռեժիմը, որի ժամանակ ձևավորված պարազիտային վերնախավը չցանկացավ ղեկավարել երկրի տնտեսական կյանքը։ Ըստ այդ հեղինակների դրանք եղան պետության տնտեսական հիմքերի թուլացման պատճառները։ Երրորդ խումբը Թուրքիայի պատմական բախտի համար պատասխանատու է համարում Արևմուտքի խոշոր տերություններին, որոնց ակտիվ գործունեությունը, իբր, հանդիսացել է Թուրքիայի հետամնացության հիմնական պատճառը։

Տարածված տեսակետը այն է, որ մինչև XVII—XVIII դդ. Օսմանյան կայսրության մեջ ռեֆորմները բացառված էին։ Իրավացի է Վ. Բարտոլդը, երբ նշում է, որ բարեփոխումները նույնիսկ տեսականորեն անհնար էին, քանի որ «պետական ու հասարակական կյանքի ամեն մի նորամուծություն համարվում է հանցագործություն կրոնի նկատմամբ»[1]։ Այս դրույթը հաստատում է թուրք պատմաբան Թ. Թունայան, հավաստելով, որ Օսմանյան, ինչպես նաև ամեն մի մահմեդական պետության մեջ տեսականորեն որևէ բարեփոխում անհրաժեշտ չէր համարվում, որովհետև նրա կառուցվածքը և մարդկային փոխհարաբերությունները մշտապես ու անխախտ կերպով տրված են Ղուրանում ու շարիաթում[2]։ Սակայն փոփոխություններն անխուսափելի էին նույնիսկ իսլամի պատվարը հանդիսացող Թուրքիայում և դրանք տեղի ունեցան։

Հոդվածի սահմանափակ շրջանակները հնարավորություն չեն տալիս անդրադառնալու այդ հարցում բոլոր թուրք հեղինակների գնահատականներին։ Մենք կանգ կառնենք ամենատարածված ու բնորոշ կարծիքների վրա։

Ճանաչված պատմաբաններ Ի. Ուզունչարշլին, Է. Կուրալը, Հ. Բայուրը, Հ. Ավնին, Հ. Ինալչըքը և ուրիշներ աշխատում են ներքին գործոնները վերլուծելով ու երբեմն քննադատելով՝ ցույց տալ երկրում տեղի ունեցող փոփո-

---

[1] В. В. Бартольд. Турция, ислам и христианство. Соч., т. VI, М., 1966, с. 413.

[2] T. Z. Tunaya. Turkiyenin sıyası hayatında batılılaşma, hareketi. Ist., 1960, s. 18.

խությունների պատկերը։ Սակայն նրանց բազմահատոր, հաճախ փաստաթղթերով ու արխիվային նյութերով հիմնավորված աշխատություններում միշտ չէ, որ արտացոլվում է օբյեկտիվ պատմական իրողությունը։ Այնուամենայնիվ նրանք ավելի սթափ են լուսաբանում անցյալը, քան նացիոնալիզմի դիրքերից ելնող բազմաթիվ թուրք հեղինակներ։ Այսպես, ԱՄՆ-ի Վիսկոնսինի համալսարանի պրոֆեսոր Ք. Կարպատը իր մի շարք դրվածներում Օսմանյան կայսրությունը համարում է աշխարհի երկարակյաց տերություններից մեկը, որը արդյունք էր, իբր, ստեղծված ներքին ներդաշնակության և սոցիալ-էթնիկական հավասարակշռության[3]։

Ի. Ջեմը իդեալականացնում է պետության սոցիալ-տնտեսական համակարգը, գնահատելով այն որպես իր ժամանակի «ամենաառաջավորը, ամենաքաղաքակրթվածը, ամենամարդկայինը»[4]։ Նրա կարծիքով, Թուրքիայի զարգացման ուղին բոլորովին նման չէր ստրկատիրությունից դեպի ֆեոդալիզմ անցած Եվրոպայի ուղուն։ Ընդհակառակը, նա գտնում է, որ իր հայրենիքը անցել է յուրահատուկ ճանապարհ՝ ժամանակի առաջավոր, զարգացած հասարակարգից դեպի թույլ զարգացածը, հավասարության և արդարության սկզբունքներից՝ դեպ ետ, ֆեոդալական հարաբերությունները[5]։ Ելնելով այդ դիրքերից, Ջեմը երկրի զարգացման վրա Արևմուտքի և ընդհանրապես արտաքին ազդեցությանը բացասական գնահատական է տալիս։ Նա գանում է, որ «արևմտականացումը, առավել ևս արագացնելով արդեն գոյություն ունեցող հասարակական և տնտեսական այլասերումը, կայսրության փլուզման գլխավոր գործոններից մեկը հանդիսացավ»[6]։ Պետության հզորությանը հասցված ամենաուժեղ հարվածը նա համարում է հողի պետական սեփականությունից մասնավոր սեփականության անցնելը։ «Այսպիսով,— գրում է նա,— հանուն արևմտականացման ուղի հարթվեց «հողի մանրացման» համար, որը գյուղատնտեսության արտադրության (զարգացման—Հ. Ի.) ամենամեծ արգելակներից մեկն է»[7]։

Մեկ ուրիշ թուրք հեղինակ՝ Դողան Ավջըօղլուն, թուրքական հասարակարգի պատմությանը նվիրված իր հայտնի ու բազմաթիվ անգամներ հրատարակված եռահատոր աշխատության մեջ պաշտպանում է համարյա նույն տեսակետները։ Նա ևս գտնում է, որ «Օսմանյան կարգը... իր ժամանակի համեմատությամբ հասել էր զարգացած քաղաքակրթության մակարդակին»[8]։ Փաստական հարուստ նյութ պարունակող այս աշխատության մեջ ևս զգացվում է թուրքական տխուր իրականությունը արդարացնելու համար ուրիշ մեղավորներ փնտրելու ցանկությունը։ Վերջապես, բերենք այս տեսակետները ամփոփող մի օրինակ ևս։ Օյա Սենջերը, բոլոր չարիքների մեղքը դնելով արտաքին ազդեցության վրա, գրում է. «Եթե կայսրությունը կարողանար հանդես գալ որպես փակ մի ամբողջություն՝ դրսից եկող բոլոր ազդեցությունների դեմ, ապա իր ներքին զարգացման ընթացքով գնալու էր տարբեր մի ուղիով։ Արտաքին ազդեցությունների պատճառով ներքին զարգացումը խանգարվեց, շեղվեց ընթացքից և մտավ նոր ուղու մեջ»[9]։ Այս հեղինակը Թուրքիայի ինքնուրույն զարգացման դեպքում բացասում է կապիտալիստական հասարակարգի տիրապետության հնարավորությունը և դրա զարգացու-

---

3 Տե՛ս «Գիտա-ինֆորմացիոն բյուլետեն». Գ մատենաշար, Երևան, 1978, № 2 (29)։

4 I. Cem. Türkiye'nın geri kalmışlığın terihi. Ist., 1971, s. 46.

5 Նույն տեղում, էջ 176—177։

6 Նույն տեղում, էջ 221։

7 Նույն տեղում, էջ 222։

8 Doğan Avcıoğlu. Türkıye'nın düzenı (dün, bugün, yarın). Ankara, 1969, s. 12.

9 O. Sencer. Türk toplumunun tarihsel evrimi. Ist., 1969, s. 39 (ընդգծումը մերն է)։

մը բացատրում է միայն Եվրոպայի ազդեցությամբ։ Հարկ ենք համարում նշել, որ բերված տեսակետը կողմնակիցներ ունի նաև արևմտյան թուրքագետների մեջ։

Ընդունելով, որ կիսագաղութային երկրների կյանքում արտաքին ազդեցությունը մեծ դեր է խաղացել, մենք գտնում ենք, որ գլխավոր ու վճռական գործոնը նրանց համար ևս մնում են ներքին պայմաններն ու զարգացման ներքին օրինաչափությունները։ Մանավանդ քաղաքականապես անկախ, հսկայածավալ Օսմանյան կայսրության պատմության մեջ դրանց ազդեցությունը միշտ էլ եղել է առաջնային և միայն կայսրության գոյության վերջին տասնամյակների վերաբերյալ կարելի է խոսել ուժեղացող արտաքին ազդեցությունների մասին։

Մեր միտքը հաստատելու համար կանգ առնենք օսմանյան ֆեոդալիզմը բնութագրող որոշ կողմերի և յուրահատկությունների վրա, քննարկելով դրանք պատմության տեսանկյունից՝ հիմք ունենալով միայն փաստական նյութը և հավաստի տեղեկությունները։

Արևելքում ֆեոդալիզմի դանդաղ զարգացման պատճառների շարքում Դ. Երեմեևը թվարկում է հետևյալները. պետական-ֆեոդալական հողատիրության և փակ գյուղական համայնքների երկարատև գոյությունը, քաղաքի և գյուղի միջև սերտ տնտեսական կապերի բացակայությունը, վաշխառության առկայությունը, քոչվորական ցեղերի հարատևող արշավանքները[10]։ Սակայն անհրաժեշտ է ավելացնել նաև տիրապետող բնությունները ու կամայականությունները, օրենքների շրջանցումը և օրինականության բացակայությունը և մի շարք այլ, Օսմանյան կայսրությանը հատուկ երևույթներ, որոնց և նվիրված է սույն հոդվածը։

Օսմանյան կայսրության միջնադարյան ու նոր շրջանի պատմությանը, ինչպես նաև պատմական առանձին երևույթներին ու զարգացման փուլերին հանգամանալից գնահատականներ են տվել Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը։ Մասնավորապես Օսմանյան պետության և նրանում տիրապետող ֆեոդալական հարաբերությունների գոյությունը նրանք համարել են «լուրջ արգելք եվրոպական պրոգրեսի համար»[11]։ Իսկ ֆեոդալական հողատիրությունը նրանք գնահատել են որպես «ֆեոդալիզմի ամենացածր և բարբարոսական աստիճանի վրա»[12] գտնվող փոխհարաբերությունների արտահայտություն։

Իրենց տիրապետության հենց սկզբից թուրք նվաճողները կայսրությունում ստեղծեցին յուրահատուկ վիճակ, որն անդրադարձավ երկրի հետագա զարգացման ամբողջ ընթացքի վրա։ Բայց զարգացման առանձնահատկություններն ավելի պարզ ու որոշակի դրսևորվեցին հատկապես տվյալ հասարակարգի հասունացման շրջանում, երբ ի հայտ եկան հաջորդ ֆորմացիային անցնելու գործոնները, սկսեցին ձևավորվել նոր հասարակական հարաբերությունները։ Հիշյալ պրոցեսն օսմանյան պետության մեջ սկիզբ էր առել դեռևս XVI դարի վերջերին։

Սակայն ֆեոդալական կարգերի ճգնաժամը հետզհետե խորանում էր և XVIII դարի վերջին—XIX դարի սկզբներին ընդգրկեց ամբողջ երկիրը՝ արտահայտվելով թե՛ սոցիալ-տնտեսական և թե՛ քաղաքական ոլորտներում։ Հողի և ընդերքի պետական սեփականությունն ու դրանով պայմանավորված հասարակական փոխհարաբերությունները, ինչպես նաև ֆեոդալների ժառանգական իրավունքների բացակայությունը այլևս չէին համապատասխանում ժամանակի պահանջներին և ըստ էության ձևական բնույթ էին կրում։ Հողատիրության ռազմաավատական սիստեմի քայքայումը մոտենում էր ավարտին,

---

10 Д. Е. Еремеев. Кочевничество и развитие феодализма на Востоке.—«Народы Азии и Африки», 1981, № 2, с. 61—62.

11 К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 9, с. 239.

12 Նույն տեղում, էջ 6։

հետգհետև ընդարձակվում էին հողի մասնավոր սեփականության սահմանները, զգալի չափերով ուժեղանում էր գյուղացիների շահագործումը։ Քաղաքական և պետական ոլորտներում տիրող կարգերի ճգնաժամն արտահայտվում էր անջատողականության, տեղայնության և ֆավորիտիզմի բուռն աճի, կենտրոնական և տեղական իշխանությունների կողմից կայսրության օրենքները արհամարհելու մեջ։ Ոչ մի պայքար չէր մղվում կաշառակերության, շորթելու անհամար ու բազմապիսի ձևերի, վարչական ու դատական մարմիններում տիրող և ահավոր չափերի հասած կամայականությունների դեմ։

Իր քաղաքականության մեջ թուրք վերնախավը ղեկավարվում էր Ղուրանի և մահմեդական օրենքների հավաքածուի՝ շարիաթի պահանջներով։ Ղուրանը պահանջում էր. «Կռվեցեք նրանց դեմ, որոնք չեն հավատում աստծուն ...մինչև այն ժամանակ, երբ նրանք թուլացած և ոչնչացված փրկագին տան իրենց կյանքի համար»[13]։ Վ. Գիրգասը, վերլուծելով Ղուրանի և շարիաթի դրույթները, ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Մուհամմեդը իր կրոնը տարածելու համար անհավատների դեմ պատերազմը հայտարարեց պարտադիր, այնպես, ինչպես պարտադիր էին աղոթքը, պասը և մահմեդականների այլ պարտականությունները»[14]։

Հեղինակը վկայակոչում է Ղուրանի համապատասխան մասը, որտեղ անհավատների մասին ասված է. «Սպանեցեք նրանց ամենուր, որտեղ նրանց կգտնեք և վռնդեցեք նրանց այնտեղից, որտեղից իրենք են վտարում ձեզ, անհավատությունը սպանությունից վատ է... կռվեցեք նրանց դեմ մինչև այն ժամանակ, երբ չի լինի անհավատություն և (իսկական) կրոնը (կպատկանի) միակ աստծուն»[15], անշուշտ այլահին։ Եվ օրենքը իմամից պահանջում է տարին մեկ կամ երկու անգամ պատերազմել «անհավատների» դեմ։ Պատերազմը համարվում էր մահմեդականությունը հաստատելու գլխավոր միջոց և ամեն մի մահմեդական պարտավոր էր այդ հիմնական նպատակին նվիրել իր անձը Ի գույքը։ Ոչ մահմեդական ժողովուրդների ու պետությունների դեմ մղվող պատերազմը համարվում էր «սրբազան» («ջիհադ») և ամեն մի չափահաս տղամարդ պարտավոր էր անձամբ մասնակցել պատերազմական գործողություններին, անկախ նրանից զինվորական է թե ոչ։

Շարիաթի համապատասխան բաժնում խոսվում է այն մասին, որ իրավացի չի լինի պատերազմ հայտարարել այն ժողովրդին, որին դեռևս չեն դիմել իսլամի կրոնը ընդունելու կոչով, կամ եթե նա համաձայնել է հպատակություն ընդունել և համապատասխան տուրք՝ ջեզիե վճարել։ Եթե «անհավատները» այս երկու պայմաններից հրաժարվում են, ապա շարիաթը պահանջում է «նրանց դեմ պատերազմ սկսել... պտղատու ծառերը և ցանքերը ոչնչացնել, անհավատների տները քանդել...»[16]։ Շարիաթը պարտադրում է չթաքցնել ավարը, չսպանել գերիներին և պատերազմին չմասնակցող ժողովրդին, այլ գերիներին ուղարկել թիկունք, որտեղ նրանք կաշխատեն «մահմեդականների հարստությունը ավելացնելու համար»[17]։ Եվ այսպես, ամենայն մանրամասնությամբ ու օրենքով սահմանվում էին այն գործոնները կամ պայմանները, որոնք ուղղված էին ընդլայնելու իսլամի տիրապետության տարածքն ու ամրապնդելու նրա ֆեոդալական-թեոկրատական պետականությունն ամենուր։

Բնականաբար, զորքի վրա հենված և նրա հաղթանակներից օգտվող պետությունն իր ուշադրության կենտրոնում էր պահում հսկայական բանակը և աշխատում էր լիովին բավարարել նրա պահանջները։ Դրա համար (հենց

---

13 Տե՛ս А. Массэ. Ислам. М., 1961, с. 30.

14 Տե՛ս В. Гиргас. Права христиан на Востоке по мусульманским законам. СПб., 1865, с. 52.

15 Նույն տեղում, էջ 53։

16 Նույն տեղում, էջ 13։

17 Նույն տեղում, էջ 14։

նույն բանակի օգնությամբ) նա ձգտում էր իր ձեռքում պահել կուտակման բոլոր աղբյուրները՝ պատերազմական ավարը, թալանի միջոցով դիզված հարստությունները, հարկերն ու տուրքերը։

Այսպիսով, երկրի ֆինանսական վիճակը բարելավելու կարևորագույն ուղիներից մեկը պատերազմի ճանապարհով հարևան «անհավատ» ժողովուրդներին իրենց ենթարկելն էր։ Փարիզի համալսարանի պրոֆեսոր, իսլամագետ Ա. Մասսեի բնորոշմամբ, նրանց նկատմամբ սահմանվել էր «հովանավորություն, որի դիմաց նրանք հարկ էին վճարում»։ Բացի գլխահարկից հպատակ քրիստոնյաները պետք է հարկ վճարեին և՛ անշարժ գույքի, և՛ հողի համար։ Նախատեսվում էր նաև հատուկ կոնտրիբուցիա՝ «մուսուլմանական զորքերին պահելու համար»[18]։

Հարկային քաղաքականության ոլորտում մահմեդական և ոչ մահմեդական ժողովուրդները դրված էին տարբեր պայմանների մեջ։ Այդ տարբերություններին տրվում էր հատուկ նշանակություն և շարիաթի օրենքներում դրանք ընդգծվում էին որպես սկզբունքային դրույթներ։ «Ըստ շարիաթի,— գրում է Գ. Քերիմովը,— այլադավաններից գանձվում են հետևյալ հարկերը՝ ջեզիե, խարաջ, խումս և ուշր։ Զեքյաթ հարկը գանձվում է միայն մահմեդականներից, իսկ ջեզիեն՝ միայն այլադավաններից։ Հարկերի մնացած տեսակները գանձվում են ինչպես մահմեդականներից, այնպես էլ այլադավաններից, բայց տարբեր չափերով...»[19]։

Ինչպես տեսնում ենք, անհավասար իրավունքների համար հիմք էր սահմանել կրոնը և միանգամայն որոշակի ձևերով արտոնություններ էին տրվում իսլամի հետևորդներին։ Գ. Քերիմովը նշում է տվյալ հարցում տարվող քաղաքականության հետևողականությունը և այն համարում է վաղ միջնադարում «քրիստոնյաների, հրեաների և հեթանոսների կողմից իսլամը մասսայաբար ընդունելու գլխավոր պատճառներից մեկը»[20]։ Սակայն բազմաթիվ են փաստերը, որոնք ցույց են տալիս, որ մահմեդականություն ընդունելու խնդրում ֆինանսական ու նյութական գործոնին զուգընթաց, իրենց վճռական ազդեցությունն են ունեցել քաղաքական ու վարչական ճնշման ձևերը, որոնք գործադրվում էին Օսմանյան կայսրության գոյության ամբողջ ընթացքում։

Հարկային քաղաքականության իրավական ու օրինական կողմը ներկայացնելիս անհրաժեշտ է ընդգծել, որ ըստ շարիաթի «մահմեդական երկրներում այլադավաններից ստացվող հարկը դիտվում էր, ամենից առաջ, որպես պետության նյութական եկամուտի կարևոր աղբյուր, և օրենքով հպատակ այլադավանների իրավունքների և գույքի պաշտպանությունը սահմանվում էր ոչ թե հանուն նրանց բարօրության, այլ մահմեդական գանձարկղի այդ կարևոր աղբյուրը պահպանելու համար»[21]։ Օրինականությունը պահպանելու դեպքում, հիշյալ բոլոր հարկերը կամ պետության պահանջները, ինչքան էլ որ նրանք ծանր լինեին ժողովրդի համար, այնուամենայնիվ տանելի էին։ Այդ են վկայում իրականությունը և ժողովուրդների ներկայացուցիչների բազմաթիվ հայտարարությունները։ Հարկերի քանակի մասին ճիշտ պատկերացում տալու համար նշենք, որ ըստ պաշտոնական տվյալների, դրանք երկու կարգի էին՝ շարիաթական, որոնց թիվը հասնում էր 350-ի և պետական, որոնք 97-ն էին։ Առաջինների մեջ, բացի հիմնականներից (ջեզիե, խարաջ, աշար, զեքյաթ) մտնում էին նաև հողագործության, անասնապահության, առևտրի, անշարժ գույքի, կենցաղային սովորույթների և այլ բազմաթիվ երևույթների վրա դրված հարկեր։

---

18 А. Массэ. Ислам, с. 61—63.

19 Г. М. Керимов. Шариат и его социальная сущность. М., 1978, с. 187.

20 Նույն տեղում, էջ 188։

21 Նույն տեղում, էջ 189։

Պետական հարկերը նշանակվում էին սուլթանի կողմից և հատկացվում էին կառավարական ծախսերը ծածկելուն[22]։ Իհարկե, պետական գանձարկղ մտնելուց հետո բոլոր գումարները ծախսվում էին սուլթանի և նրա մերձավորների հայեցողությամբ և աղբյուրների մեջ օրենքով նշված բաժանումը խիստ պայմանական բնույթ ուներ։ Ամեն պարագայում, դրանք հարցի, կարելի է ասել, ձևական կողմն էին։ Իրականում հարկերի գանձման ձևերն ու միջոցները, հատկապես օսմանյան կառավարության պրակտիկան, միշտ ժողովրդական մասսաների համար եղել են իսկական հասարակական աղետ։

Ֆ. Բերնիեն XVII դարում արդեն արմատացած սովորույթ էր համարում կանխիկ դրամով վարչական պաշտոնների՝ նահանգների, գավառների և այլ կարևոր ծառայությունների պետերի պաշտոնների վաճառքը։ Այդ երևույթը նա արձանագրել է Հնդկաստանում և Պարսկաստանում, նշելով, որ «ավելի հաճախ և հրապարակայնորեն» այն տեղի է ունենում Թուրքիայում։ Բերված փաստերից նա հետևեցնում է, որ Հնդկաստանում և Իրանում «նահանգապետների դավակները երբեմն ժառանգում են իրենց հայրերի պաշտոնները, որի հետևանքով ժողովուրդը չի գտնվում այնպիսի ճնշման տակ, ինչպես Թուրքիայում»[23]։ Եվ իսկապես, Թուրքիայի ղեկավարները վաճառում էին վարչական պաշտոնները, կապալով էին տալիս հարկերի գանձումը ու այդ պաշտոնները ստանձնողներից պահանջում էին, որ պետական դրամարկղ մուծեն որոշակի կանխիկ գումար։

Կ. Մարքսը նշել է, որ թուրքերի մասնակցությունը երկրի տնտեսական կյանքին սահմանափակվում էր նրանով, որ սահմանում էին «բազմապիսի կամայական ու բռնի խոշոր հարկեր»[24]։ Կառավարությունը երբեք չէր հետաքրքրվում, թե ինչ միջոցներով ու ձևերով էին գանձվում հարկերն ու տուրքերը։ Բնականաբար, Թուրքիայում ժողովուրդը մշտապես դժգոհ էր հարկահավաքներից։ Իրերի վիճակը չփոխվեց և արդարությունը ոչ մի կերպ չկարողացավ մուտք գործել դաժան իրականության մեջ նույնիսկ այն բանից հետո, երբ «1254 (1838) թ. մուհարրեմ ամսից հարկերի գանձումը հանձնարարվում է հարկահավաքների, որոնք նշանակվելու են պետության կողմից»[25]։ Հնում սահմանված ավանդական հարկերը ձևականորեն շարունակեցին գոյություն ունենալ, սակայն աճեցին նրանց չափերն ու բացարձակ գումարները։ Բայց այս միջոցը ևս երբեք «չբավարարեց կառավարության կարիքները»,— նշում է Ֆ. Բուլութօղլուն[26]։ Համապատասխան պաշտոնյաները և պետական մարմինները շարունակում էին ելք փնտրել, մեծ մասամբ ընտրելով նոր հարկեր ու տուրքեր սահմանելու, հների անվանումը փոխելու, գանձումների գումարներն ավելացնելու կամ անօրինական գանձումներ կատարելու ուղիներ։ Այսպես, 1856 թ. գլխահարկի փոխարեն, քրիստոնյաներից սկսեցին վերցնել ռազմական տուրք՝ «բեդել ի ասկերի», որը դրվում էր չափահաս դարձած բոլոր տղամարդկանց վրա։

Համաձայն այդ օրենքի, զինվորական հարկը պետք է վճարեին միայն զենք կրելու կարողություն ունեցող անձինք, այսինքն 20-ից մինչև 40 տարեկան հասակ ունեցողները։ Բայց հարկահանների համար օրենք ասած բանը չկար, «նոքա մինչև կաթնակեր մանուկներից զինվորական հարկ են

---

22 Տե՛ս «Թարիխ-ի Լյութֆի». «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին». հ. 7, Թուրքական աղբյուրներ. հ. 7, Երևան, 1972, էջ 230։

23 Ф. Бернье. История последних политических переворотов в государстве Великого могола. М.—Л., 1936, с. 205, 206.

24 К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 9, с. 25.

25 Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին». հ. 7, էջ 54։

26 Dr. K. Bulutoğlu. Türk vergi sistemi. Ist., 1967, s. 2.

առնում։ Նոքա կանոն են շինել իրենց համար, որ ամեն գյուղ 5000 ղուրուշ պիտի հատուցանե յուրաքանչյուր 180 բնակչի համար, առանց հասակի խտրության»[27]։ Մյուս ականատես հեղինակը արձանագրում էր, որ հարկը «լրիվ» հավաքելու նպատակով «հարկահավաքը վերցնում էր տերտերներից ծնունդներու ցուցակը, ըստ այնմ հաշվում բոլոր այրերի՝ ծերերից մինչև նորածինները, թիվը և ամեն մեկից վերցնում 37 ղուրուշ»[28]։

Այդպիսով, հարկատու քրիստոնյա բնակչության վիճակը ոչ թե կարգավորվեց, ինչպես հայտարարում էին թուրքական պետական գործիչները և գրում էին թերթերը, այլ նոր օրենքը դարձավ նոր շորթումների ու չարաշահումների միջոց։ «Եվրոպական բոլոր երկրների մեջ,— գրել է ռուս հայտնի ճանապարհորդ ու գիտնական Պ. Չիխաչևը,— հատկապես Օսմանյան կայսրությունն է իր բնակչությանը (մասնավորապես ոչ մահմեդական) ենթարկում ամենամեծ նյութական զոհաբերությունների, որովհետև օրինականացված տուրքը միայն աննշան մասն է կազմում կամայական հարկումների, որոնցով տեղական իշխանությունները սիստեմատիկորեն հարկադրում են բնակիչներին»[29]։

Ինչպես նշվեց, չարիքը գալիս էր հարկերի գանձման սիստեմից, քանի որ բոլոր կարգի ու տեսակի հարկահավաքների պաշտոնները վաճառվում էին ամենուր։ Ամեն տարի վիլայեթի կենտրոնում հավաքվում էին այն մարդիկ, որոնք ցանկություն և հնարավորություն ունեին գնելու «վաճառքում» հայտարարված հարկահավաքի (մյուլթեզիմի) պաշտոնը։ Հնարավորեն «վաճառքին» մասնակցելու իրավունք ունեին բոլոր հպատակները, անկախ սոցիալական պատկանելիությունից, կրոնից, ազգությունից ու այլ հանգամանքներից։ Սակայն տեղական իշխանությունների ներկայացուցիչներին «նախապես հայտնի էր, թե ում ինչ տեղամաս կտրվի», որովհետև նրանք միշտ էլ գտնվում էին «զնորդների հետ սերտ հարաբերության մեջ»[30]։

Շորթումների ու թալանի ծավալը անասելիորեն ընդլայնվում էր, երբ ավելի փոքր տեղամասերում կատարվում էր հարկերի գանձման պաշտոնի վաճառք այսպես կոչված «երկրորդական մյուլթեզիմներին»[31]։ Նման երևույթները Թուրքիայում դարձել էին սովորական և կառավարական շրջանները դրանք կասեցնելու համար որևէ միջոց չէին ձեռնարկում։ Իսկ եթե առանձին շրջաններում փորձեր էին արվում կարգավորելու ժողովրդի համար ծայրահեղ կենսական նշանակություն ունեցող հարկահավաքման գործը, ապա իշխանությունները միջամտում էին։

Հարկային սիստեմն ուսումնասիրող բոլոր հեղինակները հատկապես նշել են անօրինական ու լրացուցիչ հարկադրությունների քայքայիչ ազդեցությունը տնտեսության բոլոր բնագավառների վրա։ Հարկերը գանձելիս, որպես կանոն, մյուլթեզիմները գյուղացիներին ստացականներ չէին տալիս կամ երբեմն դրանց փոխարեն թողնում էին այսպես կոչված հաշվեփայտիկներ։ Այդ կարգը հնարավորություն էր տալիս նորից գանձելու նույն տուրքը, եթե գյուղացին չէր ներկայացնում մուծած լինելու որևէ ապացույց։ Իսկ հաճախ օգտվելով հարկատու հպատակների անգրագիտությունից, մյուլթեզիմները պակաս էին ցույց տալիս ստացած գումարները՝ երկրորդ ու երրորդ անգամ գանձելով դրանք, իբր լրացնում ու մարում էին «պակասը» կամ «պարտքը»։

---

27 «Փորձ». 1876, № 1, էջ 375։

28 Վ. Համբարձումյան. Գյուղաշխարհ. Փարիզ, 1927, էջ 38։

29 П. А. Чихачев. Великие державы и восточный вопрос. М., 1970, с. 194.

30 Г. Х. Инсаров. Турция и Македония.—«Вестник Европы», кн. 4, СПб., 1903. с. 678.

31 K. Bulutoğlu. Türk vergi sistemi, s. 141.

Հարկահավաքները սովորություն էին դարձրել ցանկացած առիթով առանձին անձնավորություններից պահանջել ցույց տալ հարկերի ստացականները։ «Այս պատճառով,— գրում է Վ. Գիրգասը,— ռայան պարտավոր էր իր մոտ ունենալ անցյալ տարվա վճարված խարաջի ստացականը և տվյալ տարվա հարկի լրիվ գումարը, հակառակ դեպքում նա կարող էր ձերբակալվել»[32]։ Հարկի գումարը կամ հարկի փոխարեն վերցվող գյուղատնտեսական մթերքների գինը հարկահավաքներն էին որոշում՝ այստեղ ևս խաբելով գյուղացիներին։ Աշարը կամ տասանորդը, ինչպես թելադրում է հարկի անվանումը, պետք է կազմեր բերքի $^1/_{10}$ մասը։ Որոշ փոփոխություններից հետո այն բարձրացել էր և անցյալ դարի վերջին քառորդին գանձվում էր նույնիսկ բերքի $^1/_8$ մասը։ Սակայն բերքահավաքի օրերին մյուլթեզիմներն իրենց մարդկանցով աշխատում էին կորզել բերքի $^1/_7$-ը՝ «հօգուտ պետության»։ Հարկերի մի մասը պահանջվում էր մուծել կանխիկ դրամով, որը որպես կանոն գյուղացու մոտ հառմարյա միշտ բացակայում էր։ Այդ դեպքում պետական հարկահավաքներն անխղճորեն բռնագրավում էին պարտք ունեցողների շարժական ու անշարժ գույքը և ապա այդ ամենը ցածր գներով վաճառելով՝ գումարի մի մասը յուրացնում էին իսկ մյուս մասը հանձնում պետական գանձարկղ։ Վանի մերձակայքում գտնվող Ծվաստան գյուղի բնակիչներից այդ կարգով բռնագրավել և վաճառել էին 70 ոչխար 2251 ղուրուշով, մինչդեռ դրանց արժեքը կազմում էր 4360 ղուրուշ։ Բռնագրված անասունները, հացահատիկը և նույնիսկ պտղատու ծառերը, գյուղացիներից խլված գույքը, գործիքները և այլ իրեր ևս վաճառել էին դրանց գների 50 տոկոսով միայն[33]։

Դժվարություն ուներ գյուղացիներին թալանելու մեկ այլ միջոց։ Կալը վերջանալուց հետո ցորենը կիտվում էր դեղերով, հատուկ ձևով ու նշաններով, որը խախտելու իրավունք ուներ միայն հարկահավաքը (շահնան)։ Այդ կատարվում էր հարկ վերցնելու նպատակով բերքը չափելու համար, որը և չափվում էր հատուկ պատրաստված խոշոր կոտով։ «Շահնան ավերակ ու մոխիր կցաներ ամենքի գլխին։ Եվ հեք գյուղացին, որ յուր չեճերուն (դեղ) չափ քրտինք էր թափած, կդիտեր օր-ցերեկով, իր թալանն ու նահատակությունը։ Շահնայի խմբեն վերջ կուգար հովիվը, նախորդը, քահանան, տիրացուն, վանահայրն ու փոքրավորը, գզիրը, զուռնաչին ու դավուլչին, աղքատն ու փերեզակը (չարչին), բոլորը, իրենցը տանելու։ Հասնողը, թռչունների պես, բան մը կտուցին, կառներ ու կտաներ»[34]։

Անօրինականությունները գործադրվում էին անողոքաբար, հատկապես քրիստոնյաների նկատմամբ։ «Էրզրումում,— գրում է Է. Դիլոնը,— որտեղ կա 8000 տուն մահմեդական, նրանք վճարում են 395 հազար պիաստր (ղուրուշ), մինչդեռ քրիստոնյաները, որոնց տնտեսությունների թիվը կազմում է միայն 2000, մուծում են 430 հազար պիաստր»[35]։ Նման օրինակների թիվը շատ է։ Ընդհանուր եզրակացությունը ըստ Խաժակի և այլոց ուսումնասիրությունների այն է, որ անցյալ դարի վերջերին թուրքական կառավարությունը «ուզում էր տնտեսապես հալումաշ անել քրիստոնյա տարրը, քայքայել նրա նյութականը և դրանով ստիպել կամ մահմեդականանալու, կամ թողնելու հայրենի հողը, գաղթելու»[36]։

Տեղական իշխանությունները, վաշխառուները, գործելով սուլթանի անունից և հանուն շարիաթի, ավազակաբար ու ինքնակամ գրպում, թալանում ու քայքայում էին աշխատավոր ժողովրդին։ Ամիսներ, երբեմն տարիներ իրենց աշխատավարձը չստանալով, պետական պաշտոնյաները օգտագործում էին պաշտոնական դիրքը ոչ միայն կենսական կարիքները բավարարելու, այլև

---

32 В. Гиргас, նշվ. աշխ., էջ 92։

33 Տե՛ս «Երկրի ձայնը». 1907, № 18, էջ 13։

34 Վ. Համբարձումյան. Գյուղաշխարհ, էջ 130։

35 Эм. Диллон. Положение дел в Турецкой Армении.—«Положение армян в Турецкой Армении до вмешательства держав в 1895 г.». М., 1896, с. 339.

36 Խաժակ. Հարկերը Տաճկաստանում. Բաքու, 1903, էջ 68։

հարստանալու համար։ Դողան Ավշրօղլուն բերում է տեղական զոռբայի «գործունեության» հետևյալ պատկերը։ Այդ մարդը 200 լիրայով ձեռք էր բերել մի աշիրեթի տասանորդը հավաքելու իրավունքը, որը իրականում, այսինքն տուրքը հավաքելուց հետո, պետք է կազմեր հազար լիրա։ Բայց նա կորզել էր 1400 լիրա։ Ստացվում է, որ այդ «բռնակալը 800 լիրա պետական գանձից, 400 լիրա հարկատուից, ընդամենը 1200 լիրայի կողմնակի եկամուտ է ապահովել իրեն»[37]։ Հավաքված գումարների զգալի մասը նրանք յուրացնում էին և մի շարք հիշեցումներից հետո միայն մնացածը մուծում էին պետական գանձարկղ։ Այսպիսով, կուտակման աղբյուր էին դարձել ոչ միայն ժողովրդից կորզված դրամն ու բարիքները, այլև պետության համար հավաքած հարկային գումարները, որոնք յուրացվում էին ուղղակի կամ անուղղակի միջոցներով։

Հարկահավաքների ամենասովորական գործողություններից մեկը հետևյալն էր. տեղական իշխանությունների համաձայնությամբ մուխթարը «յուրացնում է հարկի մի մասը և այն ցույց է տալիս իբր ապառիկ պանդխտության գնացած անձերի վրա»[38]։ Այսինքն պանդուխտներին համարում էին ժամանակին հարկ չմուծած և նրանք պարտք էին մնում պետական գանձարանին։ Երբ պանդուխտները վերադառնում էին հայրենիք, որպեսզի տանջանքով ձեռք բերած դրամով որոշ չափով բարելավեն իրենց քայքայված տնտեսության վիճակը, նրանց դրամը գրավվում էր «պարտքի դիմաց»։ Իսկ եթե մնում էր ինչ-որ գումար, այն էլ յուրացնում էին մյուս պաշտոնյաները այն բանի համար, որ իրենք, իբր, «ծածկել են» դրսում եղած ժամանակ նրա «կոմիտաճի» (հեղափոխական) դառնալու հանգամանքը։

Շարիաթի օրենքների համաձայն ամեն մի բարձրաստիճան կամ մահմեդական ճանապարհորդ իրավունք ուներ իր ուղևորության ընթացքում կանգ առնել քրիստոնյայի բնակարանում, որոնք, ըստ պահանջի, պարտավոր էին երեք օր պահել «հյուրին», կերակրել նրան ու նրա ուղեկիցներին, խնամել նրանց ձիերին։ Այս պարտականությունը բնակչության համար դարձել էր իսկական չարիք։ «Հյուր» էին գալիս ոչ միայն պաշտոնական անձինք, այլ նաև ճանապարհորդելու կամ զվարճանալու դուրս եկած կալվածատերեր, ցեղապետներ, շեյխեր, բեկեր, զինվորականներ ու ոստիկանական աստիճանավորներ։ Քիչ չէին դեպքերը, երբ այս կամ այն հողատերը, ցեղապետը կամ աստիճանավորը գյուղ էր գալիս մեծ խմբով, օրերով ու շաբաթներով ապրում այնտեղ. սնվելուց զատ նրանք թույլ էին տալիս կամայականություններ, բռնաբարում էին կանանց, իրենց հետ տանում էին թանկարժեք իրեր և այլն։ Այդպիսի «հյուրասիրությունը» կարող էր քայքայել նույնիսկ հարուստ գյուղացու տնտեսությունը։ Այս պատճառով էլ հյուրընկալողն աշխատում էր ժամառաջ ճանապարհել իր «հյուրին», նույնիսկ եթե պետք էր դրա համար վճարել «ատամի վարձ» («դիշ քիրեսի») կամ որպես նվեր տալ փող, արժեքավոր իրեր, զարդեր և այլն։

Չափն անցած օրինազանցություններից մեկն էլ դրամ կորզելու նպատակով անմեղ, բայց հարուստ մարդկանց ձերբակալումն էր։ Նման պարագաներում պահանջվում էր խոշոր փրկագին, առանց որի ձերբակալվածների հարազատները չէին կարող ազատել իրենց բայեկամին։ Ե. Օտյանն իր հուշերում պատմում է կամայականության նման մի դեպք՝ Սեբաստիայի գյուղերից մեկի նախկին «ջոջի» մասին, որը «օր մը ձերբակալվեր ու տարիներով բանտը մնալե ետքը, կրցեր էր ազատիլ, իր ամբողջ հարստությունը մաս առ մաս կերցնելով պաշտոնյաներուն։ Գյուղը՝ իր տունը վերադառնալով՝ թափուր գտել էր զայն»[39]։ Կորցնելով ամբողջ հարստությունը և բոլոր հարազատներին, նա հեռացել էր գյուղից, Կ. Պոլսում դարձել բեռնակիր։

Այսպիսով, չափազանց բազմերանգ ու բազմաթիվ էին կողոպտելու, գրպանելու և թալանելու ձևերն ու մեթոդները։ Դրանք ուղղակիորեն ազդում էին

---

[37] D. Avcıoğlu. Türkiye'nın düzeni..., s. 177.

[38] Ե. Թոփչյան. Երիտասարդ Թուրքերը և հայերը. Թիֆլիս, 1909, էջ 51։

[39] Երվանդ Օտյան. Երկերի ժողովածու. հ. 4, էջ 254։

երկրի տնտեսական զարգացման և դրա տեմպերի վրա։ Վերարտադրության խնդիրը չէր հուզում երկիրը կառավարողներին։ Բարենորոգումները վերաբերում էին վարչական մարմիններին, իսկ սոցիալ-տնտեսական կարգերի վրա նրանք որևէ լուրջ ազդեցություն չունեցան։ Մինչդեռ երկրի զարգացման հիմնական նախապայմաններից մեկը պետության ակտիվ ու դրական քաղաքականության անհրաժեշտությունն էր։ Քեմալ Աթաթյուրքը, կայսրության կործանումից հետո անդրադառնալով նշված պրոբլեմին, ասել է. «Ով կռվում է սրով, ի վերջո հաղթվում է նրանց կողմից, ովքեր կռվում են արորով և իր տեղը դիջում է նրանց։ Այդպես պատահեց Օսմանյան կայսրության հետ։ Բուլղարները, սերբերը, հունգարները, ռումինացիները կապվեցին արորին, նրանք ապահովեցին իրենց կենցաղը, ամրապնդեցին իրենց ուժերը, իսկ մեր ազգը քարշ էր գալիս ահա այդպիսի ֆանտիհ-նվաճողների հետևից, չէր աշխատում իր հայրենիքում և, ի վերջո, հաղթվեց նրանց կողմից»[40]։ Այս եզրակացությունը բխում էր կայսրությունում տիրող սոցիալ-տնտեսական փոխհարաբերությունների ճիշտ վերլուծումից։

Թուրքիայի համար XIX դարը հանդիսացավ անցման շրջան մի հասարակարգից դեպի մյուսը։ Սակայն այդ պրոցեսն այնքան էր դանդաղ ու տանջալից, ֆեոդալական հարաբերությունները՝ այնքան տիրապետող, որ նոր կարգերի հրևան գալը և նրանց զարգացումը երբեմն չէր նկատվում կամ հաշվի չէր առնվում։ Հաճախ հողի բռնագրավումները, գյուղացիներին ուժով հողին ամրացնելը այնպիսի տպավորություն էին թողնում, թե երկրում տեղի է ունենում ֆեոդալացման նոր պրոցես։ Իսկ պետական-ֆեոդալական և ավատական հողատիրության առկայությունը, բռնատիրական միապետության ղեկավարման ձևերը իրենց հերթին խանգարում էին կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը։

Պետք է հաշվի առնել նաև արտաքին՝ կապիտալիստական Արևմուտքի ազդեցության ուժեղացումը և Թուրքիայի՝ կիսագաղութ դառնալու հանգամանքը։ Այս վերջին պրոցեսը ուղղակի անդրադարձավ տեղական արտադրության վրա, զգալիորեն քայքայեց այն, տեղական շուկան հեղեղեց կապիտալիստական երկրների էժան ու որակյալ ապրանքներով։ Հետզհետե ավելացավ գյուղատնտեսական հումքի և մթերքների արտահանումը երկրից, ուժեղացավ գյուղացիության շահագործումը։ Միաժամանակ՝ նշված տեղաշարժերի հետևանքով, աճեցին ու ընդլայնվեցին առևտրական կապերը խոշոր տերությունների հետ, խտացան միջնորդ կամ կոմպրադորական բուրժուազիայի շարքերը։ Ստեղծվեց մի իրավիճակ, երբ կայսրության տիրող խավերի և արևմտյան խոշոր տերությունների շահերը համընկան և երկու կողմերի նպատակը դարձավ պահպանել Օսմանյան կայսրության ամբողջությունը։

Հետաքրքրական է նշել, որ օսմանյան պատմության այս ընթացքը քննադատվել է հպատակ ժողովուրդների առաջավոր ներկայացուցիչների կողմից, սակայն այդ քննադատությունը հաշվի չի առնվել թուրք վերնախավի շրջաններում։ Որպես օրինակ բերենք հայ մտավորական Հովհ. Հակոբյանի՝ «Օտար միջամտություն» խորագրով քննադատական հոդվածը Կ. Պոլսի առաջադեմ թերթերից մեկի՝ «Հայրենիքի» էջերում։ Վերլուծելով թուրք կառավարողների ներքին քաղաքականությունը, նրա ռեակցիոն էությունը և հետևանքները, հեղինակն ընդգծում է, որ այդ բոլորից տուժել են ոչ միայն հպատակ ժողովուրդները, այլև իրենք՝ թուրքերը։

Հարստահարությունները, ասպատակությունները ու ջարդերը ֆիզիկապես ոչնչացրին քրիստոնյա ժողովուրդների մի մասին։ Սրա արդյունքը եղավ տնտեսության մեջ գլխավոր ակտիվ տարրի թուլացումը, որի հետևանքով ուժեղացավ օտար կապիտալի ազդեցությունը երկրի ներսում։ «Հույները տարր մըն էին այս երկրին մեջ,— շարունակում է հեղինակը,— աշխատասեր

[40] К. Ататюрк. Избранные произведения и речи. М., 1966, с. 269.

ու քաղաքակիրթ, կողոպտվեցին, ջարդվեցին... Հրեաները նույն պատճառներով աշխարհիս ամեն կողմեր սփռվեցան։ Թուրքիայեն գացին և ուր որ հաստատվեցան՝ անհունապես նպաստեցին իրենց նոր հայրենիքին քաղաքակրթությանը...»։ Հոդվածագիրն այնուհետև նշում է, որ կառավարությունը «տարվե տարի ընդարձակ շահ մ'ուներ հայկական տուրքե, առևտրե և ձեռնարկներե։ Տարր մը վերջապես երկրին մեջ ու երկրին մասը, որ կարող էր աստիճանական սառաջխաղացմամբ պատվար մը դառնալ օտար տնտեսական արշավանքին ու մրցումին դեմ... Իրական գնահատականը երբեք հաշվի չառան կայսրության կառավարիչները։ Հայերը կոտորվեցան։ Անոնց հարստությունը, որ երկրին արտադրող դրամագլխին մեկ մասը կկազմեր, կողոպտվեցան՝ ոչնչացվելու համար։ Ու հետևա՞նքը։ Հետևանքը պարզ է։ Օտարը առանց դրամագլխի կամ աննշան դրամագլխով Թուրքիա մտավ ու ծանր տնտեսական տիրապետության շրջանին Թուրքիա տարվե-տարի հայկական արյունին տուգանք վճարեց։ Ու իր իսկ ժողովուրդին խեղճությունն ու աղքատությունը մընաց ու կմնա»[41]։

Այդ տեսակետը բաժանում էին նաև թուրք մտավորականների մի շարք ներկայացուցիչներ։ Անցյալ դարի վերջի և մեր դարասկզբի հայտնի գործիչներից «Միզան» թերթի տնօրեն և խմբագիր Մուրադբեյը («Միզանջի Մուրադ») երիտթուրքերի հեղաշրջումից հետո երկրի վիճակը բնութագրում է այսպես. «Աղեկ գիտենանք, որ բռնակալությունը և զուլումը մեռցուցած էին ազգային կյանքը և շարունակ ետադիմելու վրա էինք»[42]։

Աբդուլ Համիդի ժամանակաշրջանի պատմության վերաբերյալ ծավալուն աշխատության հեղինակ Օ. Նուրին բոլոր դժբախտությունների աղբյուրը և հետամնացության պատճառները ևս համարում է ներքին գործոնները։ Նրա կարծիքով հիվանդագին երևույթները թուլացրին կայսրությունը և պայմաններ ստեղծեցին օտարների ներթափանցման համար։ «Ազգը հյուծվում էր,— գրում էր Օ. Նուրին,— անիրավությունների, անարդարության, զուլումի և բռնակալության տակ։ Բոլոր պետական հիմնարկությունները գործում էին գողության, բռնության և դաժանության սկզբունքներով։

Բանակի հոգին հանդիսացող սպաների շրջանում կարգապահության նըշույլ անգամ չէր մնացել... Թե՛ զինվորականության շրջանում և թե՛ այլուր իրավունքը և արդարությունը առանց կաշառքի կամ մեկի բարձր հովանավորության չէր կարող գոյություն ունենալ»[43]։

Թուրք առաջադեմ գրականության հայտնի դեմքերից Թեվֆիկ Ֆիկրեթի հետևորդ և «զուլումի» վերջին տարիների ականատես, գրող Խալիդ Զիյա Ուշաքլիլը այդ շրջանը բնութագրել է հետևյալ խոսքերով. «Ամբողջ երկիրը՝ վիլայեթներից մինչև կաղաները, ներսից ու դրսից ուտում էին որդերը։

Երկրի բոլոր հարստությունները կառավարությունն ուղղում էր պալատի անկուշտ երախը։ Ծառաները ընտրվում էին դավաճաններից, մինիստրները՝ գողերից, ստոր մարդկանց ու սրիկաներին շնորհվում էին բարձր պաշտոններ, շքանշաններ էին կախվում համազգեստներից, որոնց տակ կեղտից բացի ոչինչ չկար...»[44]։

Ժամանակակից Թուրքիայի տնտեսության պրոբլեմների մասնագետ, սովետական տնտեսագետ Ի. Ալիբեկովը, վերլուծելով կայսրության զարգացման տեմպերը և ընթացքը, գտնում է, որ «հենց միայն ներքին գործոններն ինքնին այնքան բազմաթիվ և նշանակալից էին, որ բավական էին ուժեղ կերպով արգելակելու թուրքական արդյունաբերության (մենք կավելացնենք նաև

---

41 «Հայրենիք». Կ. Պոլիս, 4/17 օգոստոսի 1909։

42 «Ազատարար շարժուն բանակին հաղթական մուտքն ի Կ. Պոլիս». պրակ. առաջին, Կ. Պոլիս, 1909, էջ 91։

43 Osman Nuri. Abdulhamid sanı ve devri saltanatı. Ist., 1911, s. 1123.

44 Р. Г. Фиш. Турецкие дневники. М., 1977, с. 46.

ամբողջ տնտեսության—Հ. Ի.) զարգացումը, եթե նույնիսկ բացակայեին արտաքին ազդեցության գործոնները»[45]։

Այսպիսով, միանգամայն տարբեր ժամանակների, տարբեր դասակարգերի ու տեսակետների ներկայացուցիչներ չարիքի արմատն իրավացիորեն փնտրել են տիրապետող կարգերի և Օսմանյան կայսրությունում դարերով ամրապնդված ֆեոդալական ու մինչֆեոդալական հասարակական փոխհարաբերությունների մեջ։ Թուրքական ֆեոդալիզմի ամենաբնորոշ կողմերից մեկը այն էր, որ նա ամեն կերպ դանդաղեցնում էր Օսմանյան կայսրության տընտեսական, հասարակական-քաղաքական ու կուլտուրական կյանքի զարգացումը և դառնում երկրի հետամնացության գլխավոր պատճառը։ Վ. Ի. Լենինը, դեռևս մեր դարասկզբին, Թուրքիայի վիճակը բնութագրել է որպես «տևական տանջալից անկում և քայքայում, տանջալից մանավանդ ժողովրդի, բոլոր աշխատավոր և շահագործվող մասսաների համար»[46]։ Իրականությունը լիովին հաստատեց այդ հետևությունը։

О НЕКОТОРЫХ ХАРАКТЕРНЫХ СТОРОНАХ ТУРЕЦКОГО ФЕОДАЛИЗМА

Доктор ист. наук О. Г. ИНДЖИКЯН

(Резюме)

Военно-феодальные отношения, господствовавшие в Османской империи (кочевое хозяйство и родо-племенные отношения, государственная собственность на землю, военно-ленная система и т. д.), всячески тормозили общественное развитие страны. Отсутствие наследственных прав, продажа должностей привели к засорению административного аппарата, тем самым создавая условия для произвола, беззакония, вымогательства. Вся внутренняя политика Турции способствовала длительному существованию феодальных устоев, разорению инонациональной и мелкой буржуазии—наиболее активных и динамичных элементов в экономике империи, что замедляло экономический прогресс и затрудняло установление капиталистических отношений. Многочисленные и значительные отрицательные факторы внутреннего развития облегчили процесс превращения Турции в полуколонию. Одной из главных причин отставания страны были указанные неблагоприятные экономические условия и общественно-политические порядки.

---

45 И. В. Алибеков. О причинах промышленной отсталости полуколониальной Турции.—„Etudes Balkaniques", 1975, № 3, p. 86.

46 Վ. Ի. Լենին. Երկ. հ. 10, էջ 373։